

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ

Անվտանգության այսօրվա աշխարհակառուցվածքը՝ իր բազմատարր և գործուն մեխանիզմներով, ենթարկվում է նոր, ոչ ավանդական փորձությունների, որոնց կանխարգելման եղանակները շարունակ փոխվում են ու հղկվում: Անվտանգության միաբևեռ համակարգ ստեղծելու ձգտումներն առաջ են բերում մի շարք ոչ համաչափ սպառնալիքների շարունակական զարգացում, որն իր հերթին հանգեցնում է այդ սպառնալիքների հաղթահարման համակարգի գլոբալացման: Թեև աշխարհում նվազում է գլոբալ և դասական պատերազմների հավանականությունը, սակայն, միևնույն է, միջազգային անվտանգությունը հետզհետե դառնում է առավել փխրուն ու խոցելի:

Նման պայմաններում գլոբալացվում են նաև առանձին պետությունների անվտանգության ապահովման խնդիրները, որոնք ավելի ու ավելի են փոխկապակցվում տարածաշրջանային և միջազգային անվտանգության հետ: Այսօր բոլոր մեծ ու փոքր պետություններում, միջազգային և տարածաշրջանային կառույցներում ընթանում են անվտանգության հայեցակարգերի, սպառնալիքների հակազդման ավանդական մեխանիզմների արդիականացման գործընթացներ, որոնք պայմանավորում են միջազգային ինտեգրացիոն գործընթացների ուղղվածությունը<sup>1</sup>:

Այս երևույթները ավելի ցայտուն են դրսևորվում այն տարածաշրջաններում, որտեղ ռազմաքաղաքական իրադրությունը դեռևս խնդրումների, կայացման կամ փոփոխման փուլում է: Այդ առումով Հարավային Կովկասը, իր պատմական դրամատիկ ժառանգությամբ, միջէթնիկական հարաբերությունների բարդ խճանկարով, անվտանգության համաչափ և ոչ համաչափ սպառնալիքների լայն շրջանակով և բազում հակամարտություններով յուրահատուկ տարածաշրջան է, որի վրա ազդում են անվտանգության արտաքին և ներքին հակասական բոլոր գործոնները:

20-րդ դարի վերջին՝ Խորհրդային Միության կազմալուծումից հետո, իր անկախությունը վերականգնած Հայաստանի Հանրապետության առջև ծառայող անվտանգության ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային մարտահրավերներ: Ներտարածաշրջանային մարտահրավերներն առավելապես պայմանավորված են այնտեղ առկա ազգամիջյան հակամարտություններով, իսկ արտատարածաշրջանային մարտահրավերները այն արտաքին ուժերի գործունեության հետևանք են, որոնք փոր-

<sup>1</sup> Տե՛ս «Конституционно-правовой статус Совета Безопасности Российской Федерации». М., 2009, էջ 8-9:

ծում են տարբեր մեթոդներով ու միջոցներով վերահսկել և իրենց շահերին հարմարեցնել տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական իրավիճակը: Բացի այդ, տարածաշրջանի որոշ երկրների գործելակերպում նկատելի է հարցերը ուժ կիրառելու կամ այն կիրառելու սպառնալիքի միջոցով լուծելու անթաքույց ձգտում:

Տարածաշրջանային սպառնալիքները և դրանց չեզոքացումը կազմում են Հարավային Կովկասի անվտանգության հիմնական չափորոշիչները: Որպես այդպիսի սպառնալիքներ կարելի է նշել ինչպես տարածաշրջանային պետությունների միջև առկա հակասությունները, անվտանգության բնագավառում նրանց որդեգրած քաղաքականության որոշակի տարբերությունները, այնպես էլ այստեղ առկա մի շարք հակամարտությունները:

Առկա հակամարտություններով են պայմանավորված նաև տարածաշրջանային և արտատարածաշրջանային պետությունների միջև հարաբերությունները, որոնք նույնպես անվտանգ միջավայր ձևավորելու կարևոր բնորոշիչներ են: Մասնավորապես, տարածաշրջանային անվտանգությունը ապակայունացնող գործոններ են հայ-ադրբեջանական, հայ-թուրքական, ռուս-վրացական, իրանա-ամերիկյան լարված հարաբերությունները, որոնց հիման վրա մշակվում է այդ պետությունների արտաքին և տնտեսական քաղաքականությունը:

Միևնույն ժամանակ առաջանում են լարվածության այնպիսի օջախներ, որոնք դուրս են գալիս տարածաշրջանի սահմաններից և ընդգրկում են նաև մերձտարածաշրջանային պետությունները: Մասնավորապես, որպես տարածաշրջանային անվտանգության միջավայրի վրա ազդող նման գործոններ կարելի է համարել իրաքյան խնդիրը, մերձավորարևելյան հակամարտությունը, միջազգային հանրության հետ Իրանի ունեցած տարածայնությունները, քրդական հարցը և այլն:

Վերջին տարիների միջազգային զարգացումները հրապարակ են հանել այնպիսի սպառնալիքներ, որոնց չեզոքացման համար ներպետական և տարածաշրջանային շահերից զատ հարկ է առաջնորդվել միջազգային անվտանգության համակարգերի զարգացման, դրանց արդյունավետության բարձրացման սկզբունքներով, քանի որ առանձին վերցրած ոչ մի պետություն ի վիճակի չէ պայքարելու այնպիսի չարիքների դեմ, ինչպիսիք են, օրինակ, միջազգային ահաբեկչությունն ու թմրադեղերի, հոգեմետ նյութերի և զանգվածային ոչնչացման զենքի տարածումը: Համաշխարհային հանրությանը միջազգային ահաբեկչության նետած մարտահրավերները առավել քան արդիական են, ուստի ահաբեկչության դեմ պայքարում ներգրավվածությունը և ընդհանրապես դրա շուրջ ձևավորվող քաղաքականությունն այսօր առաջնային նշանակություն ունեն անվտանգության համակարգերում պետության ներգրավվածության և, հետևաբար, անվտանգության երաշխիքներ ստեղծելու գործում:

Վերը նշված սպառնալիքները խոր արմատներ են գցել ինչպես Կենտրոնական Ասիայում, այնպես էլ Մերձավոր Արևելքում, Կովկասում, Բալկաններում: Հարավային Կովկասը, գտնվելով դրանց խաչմերուկում և լինելով տնտեսապես թույլ ու անկայուն, լի հակամարտություններով և միջպետական հակասություններով, բավականին խոցելի է միջազգային ա-

հաբեկչության ներթափանցման և բեղմնավոր գործունեության ծավալման առումով:

Հարավային Կովկասում ռազմաքաղաքական փոխհարաբերությունների բնույթն անմիջականորեն կախված է տարածաշրջանի աշխարհաքաղաքական բնութագրից և աշխարհագրական յուրահատուկ դիրքից, որոնք ապահովում են նրա, այսպես կոչված, «հաղորդակցային միջանցքի» գործառույթը<sup>2</sup>:

Տարածքային առումով Հարավային Կովկասը գտնվում է տնտեսական շահերի և միջազգային միջանկյալ առևտրի ուղիների խաչմերուկում: Ռազմաքաղաքական առումով այն աչքի է ընկնում բարձր կոնֆլիկտայնությամբ, ներտարածաշրջանային շահերի ինտեգրման բացակայությամբ և կտրուկ արտահայտված ռիսկայնության գործոններով: Այնպիսի հակամարտությունների առկայությունը, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղի և վրաց-արխազական կոնֆլիկտները, իրոք լուրջ խնդիրներ են ստեղծում տարածաշրջանում տնտեսական ինտեգրման ծրագրերը արդյունավետ գործարկելու համար: Դրա վառ օրինակ են TRASECA, INOGATE և «Մետաքսի մեծ ճանապարհ» ծրագրերը, որոնց արդյունավետ գործարկման ապագան ուղղակիորեն պայմանավորված է Հարավային Կովկասում առկա հակամարտությունների շուրջ ձևավորված իրավիճակի՝ քաղաքականապես էական երեք հիմնական հետևանքների՝ հաղորդակցային շրջափակման, փախստականների զգալի չափաքանակի և զինված գործողությունների հետևանքով ազատագրված տարածքների հետագա կարգավիճակի հստակեցմամբ:

Հարավային Կովկասում վերջին տասնամյակի զարգացումները ձևավորել են ռազմաքաղաքական և միջազգային-իրավական խնդիրների այնպիսի ոլորտներ, որոնք արտացոլում են ոչ միայն ներտարածաշրջանային սուբյեկտների շահերը, այլև պայմանավորված են տարածաշրջանից դուրս գտնվող քաղաքական ազդեցիկ պետությունների և դաշինքների շահերով: Հենց այս շահերի մրցակցությունն է, որ տարածաշրջանում ձևավորում է քաղաքական կլիմա:

Տարածաշրջանում մրցակցող և բախվող շահերը պատճառ են դառնում Կովկասում ընդհանուր բնույթի հետևյալ խնդիրների առաջացման՝ տարածաշրջանի սուբյեկտների հարաբերություններ Ռուսաստանի Դաշնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ, «իրանական» և «թուրքական» տարածաշրջանային զարգացումներում հակամարտությունների և դրանց հետևանքների լուծում, տարածաշրջանային մի շարք քաղաքական սուբյեկտների միջազգային-իրավական կարգավիճակի որոշում՝ ռազմական վերահսկողություն և անվտանգություն, Սև ծովում սահմանային վերահսկողություն, Կասպից ծովի բաժանում և կարգավիճակի որոշում, նավթի արտահանում, տարածաշրջանային ինտեգրացիա և համագործակցություն<sup>3</sup>: Այս պայմաններում ակնհայտ է, որ տարածաշրջանային համագործակցության և ինտեգրման մթնոլորտի ձևավորումը կապված է

<sup>2</sup> Стен Котанджян Г. С. В повестке – комплементаризм и многовекторность оборонной политики // «Голос Армении», 2007, 16 ноября:

<sup>3</sup> Стен Калужный В. И. Каспийская политика России // «Дипломатический ежегодник», 2006, էջ 42:

տարածաշրջանում անվտանգության համակարգ ստեղծելու գերխնդրի հետ, որը կարող է Հարավային Կովկասում կայունության ապահովման յուրահատուկ երաշխիք դառնալ: Այս առաջնահերթությունը կարևոր է այն առումով, որ Հարավային Կովկասը և ենթատարածաշրջանում ակտիվ ներգրավվածություն ունեցող պետությունները Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնային օղակ հանդիսացող անմիջական միջավայրն են: Այս միջավայրում են Հայաստանի կենսական շահերը իրագործվում, և հենց դրա բնույթով է պայմանավորված Հայաստանի արտաքին քաղաքական առաջնային խնդիրները լուծելու, մասնավորապես անվտանգության ու տնտեսական առաջընթացն ապահովելու արդյունավետությունը: Ուստի պատահական չէ, որ տարածաշրջանում հարաբերությունների համապարփակ կարգավորմանն ուղղված կայունության և անվտանգության համակարգի ստեղծումը ներկայումս Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգի առաջնային խնդիրներից է:

Տարածաշրջանային անվտանգության և համագործակցության համակարգի ձևավորման գաղափարի երևան գալը պայմանավորված է մի շարք հիմնարար հանգամանքներով: Նախ, Հարավային Կովկասում առկա են բազմաթիվ հակամարտություններ, որոնք ինքնին լարվածության աղբյուր են: Երկրորդ, հարակից երկրներում ևս գոյություն ունեն մի շարք հակամարտությունների օջախներ (Հյուսիսային Կովկաս, քրդական հարց և այլն), որոնք հավանական վտանգ են պարունակում Հարավային Կովկասի երկրների համար: Երրորդ, Հարավային Կովկասում ակտիվ ներգրավվածություն ունեն հարևան պետությունները՝ Ռուսաստանը, Թուրքիան, Իրանը, ինչպես նաև ԱՄՆ-ը և Եվրոպական միությունը, որոնք շատ անգամ իրարամերժ քաղաքական նպատակներ են հետապնդում տարածաշրջանում: Չորրորդ, այս պետությունների շահերի բախումը նպաստում է տարածաշրջանում անկայունության պահպանմանը, բաժանարար գծերի առաջացմանը և միևնույն նպատակների շուրջ միավորված պետությունների առանձին խմբերի միջև լարվածության խորացմանը: Հինգերորդ, ներկայումս տարածաշրջանում գոյություն չունի հիմնական դերակատարներ հանդիսացող, բայց և տարբեր շահեր հետապնդող վերոնշյալ բոլոր պետություններն ընդգրկող միջազգային որևէ ատյան: Ուստի, նման պայմաններում հարավկովկասյան տարածաշրջանային խնդիրներն արդյունավետ լուծելու հավանականությունը չափազանց ցածր է:

Թվարկված հանգամանքները մի կողմից վկայում են Հարավային Կովկասում հարաբերությունների ավելի բարենպաստ միջավայր, իսկ մյուս կողմից՝ շահագրգիռ բոլոր կողմերն ընդգրկող տարածաշրջանային ատյան ստեղծելու անհրաժեշտության մասին: Նման ատյանը կարող է նշանակալից գործոն լինել փոխադարձ վստահություն ամրապնդելու, երկարատև խաղաղություն և կայունություն հաստատելու, բաժանարար գծերը վերացնելու, ինչպես նաև երկրների միջև համագործակցություն խթանելու և, ի վերջո, առկա հակամարտությունները կարգավորելու համար: Ընդ որում, այս նպատակների իրականացումը՝ այս կամ այն ձևաչափով, համապատասխանում է ոչ միայն կովկասյան երեք երկրների, այլ նաև տարածաշրջանում ակտիվ ներգրավվածություն ունեցող այլ պետությունների շահերին:

Այսպես, 1996 թվականի հունիսին Կիսլովոդսկում Ռուսաստանի և հարավկովկասյան երեք հանրապետությունների նախագահների հանդիպման ժամանակ պաշտոնական Մոսկվան ներկայացրեց Հարավային Կովկասում խաղաղության և կայունության հաստատման իր ծրագիրը: Առաջարկվող փաթեթը ենթադրում էր տարածաշրջանում Ռուսաստանի աշխարհաքաղաքական ներկայության հաստատագրում և տարածաշրջանային հակամարտությունները լուծելու միջնորդավորված կառույցների և մեխանիզմների ստեղծում: Ընդսմին, նախատեսվում էր խթանել Իրան-Թուրքիա գործակցությունը: Սակայն այդ ծրագրի գրավչությունը Վրաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության համար ակնհայտորեն նվազեց, ապա վերացավ, քանի որ առաջարկվող ծրագրում բացահայտ ընդգծվում էր հարավկովկասյան աշխարհաքաղաքականությունից արևմտյան պետություններին և հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներին հեռու պահելու Ռուսաստանի Դաշնության միտումը: Կիսլովոդսկյան ձևաչափի նկատմամբ պաշտոնական Հայաստանի Հանրապետության դիրքորոշումն ընդհանուր առմամբ բնութագրվում էր հետևյալ մոտեցումներով. թեև առաջարկը չի կարող ծառայել այդ համակարգի ստեղծման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նպատակներին, սակայն, շահագրգիռ մյուս պետությունների կողմից թուրքական առաջարկը<sup>4</sup> առաջ մղելու և «3+3+2» ձևաչափը<sup>5</sup> միանշանակ ժխտելու դեպքում, Հայաստանը կպաշտպանի այն և կդիտի որպես այլընտրանքային տարբերակ: Միաժամանակ, «3+1» տարբերակը չի բացառում հետագայում մյուս կողմերի միանալու հնարավորությունը, և այդ հիմքի վրա Հայաստանի առաջարկած բոլոր ութ դերակատարներին ընդգրկող համակարգ ստեղծելու հավանականությունը: Ավելի ուշ Ռուսաստանի առաջ քաշած նախաձեռնությունը՝ ուղղված տարածաշրջանում կայունություն ապահովելուն, որը հայտնի էր «Կովկասյան քառյակ» անվանումով, նույնպես խնդիր ուներ հակազդելու այնպիսի կառույցների և կազմակերպությունների ձևավորմանը, որոնց շրջանակներում արևմտյան երկրներն ու Թուրքիան հնարավորություն կունենային Հարավային Կովկասի հետագա զարգացման գործում ստանձնելու առանցքային դերակատարում:

Այդ մոտեցման մասին էր վկայում նաև Վ. Պուտինի հայտարարությունն առ այն, թե «հարավկովկասյան հանրապետություններն իրենք պետք է որոշեն սեփական տարածաշրջանի ճակատագիրը»<sup>6</sup>: 2000 թվականի հունվա-

---

<sup>4</sup> Թուրքիան, ինչպես նաև Ադրբեջանն ու Վրաստանը, հիմնականում ԱՄՆ-ի ազդեցությամբ առաջարկում էին կայունության համակարգը ձևավորել ԵԱՀԿ հովանու ներքո, որով Իրանը դուրս էր մնում համակարգից: Թուրքական առաջարկը ընդունելի չէր Հայաստանի համար, քանի որ խախտում էր երկրների միջև հավասարակշռությունը՝ դուրս մղելով Հայաստանի տնտեսական գործընկեր Իրանին և առավելություններ տալով Թուրքիային, որը, վարելով հակահայկական քաղաքականություն, չէր նպաստում տարածաշրջանում բաժանարար գծերի վերացմանը, այլ ընդհակառակը՝ խորացնում էր դրանք:

<sup>5</sup> Նշյալ ձևաչափը ենթադրում էր այնպիսի ատյանի ստեղծում, որտեղ ներգրավվելու էին Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Իրանը, Թուրքիան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, եվրոպական պետությունները:

<sup>6</sup> "Пресс-конференция Президента Российской Федерации В. В. Путина по итогам заседания Совета Коллективной Безопасности" // "Дипломатический вестник", 2001, июнь.

րից տարբեր պարբերականությամբ ՌԴ-ի, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի նախագահները կայունության և հակամարտությունների լուծման միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ԱՊՀ գագաթնաժողովների շրջանակներում՝ «Կովկասյան քառյակի» ձևաչափում, հանդիպումներ ունեցան տարածաշրջանում: Չստանալով ինստիտուցիոնալ ձևակերպում՝ նշյալ ձևաչափը, այնուամենայնիվ, կարող էր ծառայել որպես առավել լայն համագործակցության բարենպաստ հարթակ, որում թերևս շահագրգիռ էին թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը:

2002 թվականի մարտին «Կովկասյան քառյակի» հերթական նստաշրջանի ժամանակ առաջացավ օրակարգի փոփոխության անհրաժեշտություն: Ռուսաստանը հույս ուներ, որ «Կովկասյան քառյակի» անդամ երկրները միացյալ մոտեցումներ կձևակերպեն տարածաշրջանային անվտանգության և կայունության խնդիրների վերաբերյալ և հատկապես այնպիսի նոր մարտահրավերների պարագայում, ինչպիսիք են միջազգային ահաբեկչությունը, կազմակերպված հանցավորությունը, անօրինական միգրացիան, զինամթերքի ու թմրանյութերի հանցավոր շրջանառությունը<sup>7</sup>: Պաշտոնական Մոսկվան կոչ էր անում հարավկովկասյան հանրապետություններին առավել ակտիվ մասնակցություն ունենալ ԱՊՀ հակաահաբեկչական կենտրոնի գործունեությանը<sup>8</sup>:

Վրաստանն ու Ադրբեջանն անհանգստությամբ վերաբերվեցին անվտանգության ոլորտում համագործակցության իրականացման Ռուսաստանի այս նախաձեռնություններին, քանի որ դեռ 1990-ական թվականներին այդ պետություններն իրենց հեռու էին պահում ԱՊՀ անվտանգության և պաշտպանական կառույցներից, թեև առավել ցածր մակարդակում փորձում էին համագործակցել Ռուսաստանի Դաշնության հետ: Այսպես, 2003 թվականի մարտին Ադրբեջանի, Ռուսաստանի և Վրաստանի սահմանապահ զորքերը Դաղստանում<sup>9</sup> համատեղ զորավարություններ անցկացրին:

Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության միջավայրն ապակայունացնող այլ ազդակներ են բաժանարար գծերի ձևավորման միտումները, միջազգային անվտանգության համակարգերի տարածայնությունները և մոտեցումների տարբերությունները, էներգետիկ ռեսուրսների, տնտեսական, հաղորդակցության և այլ ուղիների աններդաշնակ և շրջանցիկ շահագործման հեռանկարները, տարածաշրջանում ընթացող սպառազինման և վերազինման գործընթացը, տարածքային և այլ բնույթի տարածայնություններն ու հավակնությունները և մի շարք այլ գործոններ:

Այս գործոնները և մարտահրավերները միմյանցից զգալիորեն տարբերվում են, ունեն տարբեր պատճառներ և հնարավոր հետևանքներ, ուստի դրանցից յուրաքանչյուրի չեզոքացումը Հայաստանից պահանջում է որդեգրել անհատական մոտեցումներ:

<sup>7</sup> Տե՛ս «Государственный интерес или имперская ностальгия?» // «Независимая газета», 2004, 26 января:

<sup>8</sup> Տե՛ս Allison, R. Strategic Security Dilemmas in the Caucasus and Central Asia: The Limits of Multilateralism, NBR Analysis, vol. 14, no. 3 (October 2003), էջ 6:

<sup>9</sup> Տե՛ս «Америка как стратегический союзник России» // «Независимая газета», 2003, 29 октября:

Հայաստանի շուրջ ձևավորված միջավայրից բխող այս, ինչպես նաև բազմաթիվ այլ համաչափ և անհամաչափ, ներքին և արտաքին, տարածաշրջանային և արտատարածաշրջանային մարտահրավերների չեզոքացման խնդիրները, ձևերը և եղանակներն են մեծապես պայմանավորում Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի բնույթն ու բովանդակությունը, այդ թվում՝ ռազմական ռազմավարության սկզբունքները, նպատակները և խնդիրները, պաշտպանական համակարգի կառուցվածքն ու զարգացման հեռանկարները, քանի որ նման պայմաններում հարկ է էապես վերաիմաստավորել անվտանգության վերաբերյալ ավանդական պատկերացումները՝ զգալիորեն ընդլայնելով անվտանգությանը, այդ թվում՝ պաշտպանական անվտանգությանն առնչվող հարցերի շրջանակը: Այդ պատճառով անհրաժեշտություն է ծագում վերանայելու ինչպես պետության պաշտպանական համակարգի առջև դրված խնդիրների ցանկը, զինված ուժեր կիրառելու պայմաններն ու պահանջները, այնպես էլ զինված ուժերի թվաքանակը, կառուցվածքը, ռազմատեխնիկական քաղաքականությունը, մարտական պատրաստականության էությունն ու ուղղվածությունը:

Տարածաշրջանի երեք պետություններն էլ, ներգրավված լինելով հակամարտություններում (Հայաստանն ու Ադրբեյջանը՝ դարաբաղյան, Վրաստանը՝ աբխազական և օսական), դրանցից բխող խնդիրները լուծելու հարցում ելնում են իրենց ազգային-պետական շահերից, որոնք ակնհայտորեն հակամետ են, շատ դեպքերում՝ իրարամերժ: Չնայած բոլոր ջանքերին՝ առկա հակամարտությունների լուծման ուղիները շարունակում են մնալ անորոշ:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցն այսօր էլ տարածաշրջանի հանգուցակետային խնդիրներից է: Հակամարտության կողմերի մոտեցումները խնդրի լուծման ուղղությամբ, ցավոք, շարունակում են բազմաթիվ հակասություններ պարունակել: Ղարաբաղյան հակամարտության պատմական իրողությունն այն է, որ կամքի սահմանադրական արտահայտմամբ Ադր. ԽՍՀ տարածքում ստեղծվեցին երկու անկախ իրավահավասար պետություններ՝ ԼՂՀ-ն և ԱդրՀ-ն, և օրինական ձևով դադարեցվեցին ինչպես լուծարված ԽՍՀՄ-ի, այնպես էլ Ադր. ԽՍՀ-ի նկատմամբ ԼՂՀ ժողովրդի, տարածքի ու իշխանությունների ենթակայության հարաբերությունները: ԼՂՀ-ի կարևոր քաղաքական-իրավական առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն ազգամիջյան հակամարտությունների ընթացքում ինքնահռչակ այլ պետությունների, ԼՂՀ-ում անկախ պետականության ձևավորումը իրագործվեց ԽՍՀՄ Սահմանադրության իրավակիրառ ժամանակաշրջանում<sup>10</sup>:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն աջակցելու առաքելությունը կողմերի համաձայնությամբ վստահվել է ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի համանախազահությամբ: Հայաստանի Հանրապետությունը կարևորում է խնդրի կարգավորման շուրջ

<sup>10</sup> Տե՛ս **Յ. Ս. Քոթանջյան**, Ղարաբաղյան հակամարտության լուծման առանձնահատկությունները (քաղաքագիտական փորձաքննություն) // Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ, ԽՍՀՄ վերակառուցում - Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս - Աֆղանստան, Եր., 2009, էջ 202-203:

ծավալվող քննարկումների մասնակիցների փորձագիտական բարձր մակարդակը: Հայաստանի իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ հակամարտության լուծումը տեսնում են ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում՝ փոխզիջումային և խաղաղ կարգավորման միջոցով: Այս առումով մեծ գնահատանքի են արժանի Մինսկի խմբի ջանքերը հակամարտության լուծման ընդունելի տարբերակներ գտնելու գործում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման իրավական հիմքերն անխոցելի են: Մշտապես ելնելով այն սկզբունքից, որ ցանկացած վերջնական համաձայնություն կամ վերջնական փաստաթուղթ պետք է արժանանա նաև ղարաբաղյան կողմի հավանությանը, Հայաստանն ընդունելի է համարում կարգավորման միայն այն տարբերակները, որոնք ուղղված կլինեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստացի գոյության անշրջելի իրողությունն ամրագրելուն: Լեռնային Ղարաբաղը պետք է աշխարհագրական կապ ունենա Հայաստանի հետ: Անվտանգությունը պետք է երաշխավորված լինի: Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված անմիջական ռազմական սպառնալիք է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ Ադրբեջանի վարած ռազմատենչ քաղաքականությունը, այն է՝ այդ հիմնախնդիրը լուծել Հայաստանի նկատմամբ ռազմական գերազանցության հասնելու միջոցով: Ուստի, Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերից պահանջում է մշտական բարձր մարտական պատրաստականություն: Այս գործում Հայաստանի զինված ուժերի գլխավոր խնդիրն է Հայաստանի Հանրապետության սահմանների անձեռնմխելիության, ինչպես նաև Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովումը: Սակայն Ադրբեջանը շարունակում է տարբեր հնարքներով խուսափել հակամարտության խաղաղ կարգավորման տարբերակներից և իրականացնում է ռազմատենչ քաղաքականություն՝ մի քանի անգամ ավելացնելով ռազմական բյուջեն և իր ժողովրդի մեջ Հայաստանի ու հայերի նկատմամբ սերմանելով թշնամանք:

Որպես ամփոփում կարելի է ընդհանրացնել, որ եթե ներտարածաշրջանային երկրները, մակրոտարածաշրջանային և համաշխարհային տերությունները իրապես շահագրգիռ են Հարավային Կովկասում անվտանգության և կայունության ապահովման հարցում, ապա դրան հասնելու հիմնական ուղղությունը տարածաշրջանում ուժերի հավասարակշռության համակարգ ձևավորելն է, որը աշխարհաքաղաքական վերափոխումների համատեքստում կնվազեցնի տարածաշրջանային անկայունության միտումները՝ առավել կանխատեսելի դարձնելով նաև Հարավային Կովկասի անվտանգությունն ու ռազմաքաղաքական վիճակը:

**ТИГРАН КОЧАРЯН – Армения в контексте региональной и международной безопасности.** – В наше время многогранная системная безопасность должна соответствовать новым угрозам, и способы их предотвращения нуждаются в постоянном совершенствовании. Однополюсная система безопасности обуславливает развитие ряда неравномерных угроз, что, в свою очередь, приводит к глобализации рычагов их применения.

Южный Кавказ с его историческим наследством, сложными межэтническими отношениями, широким кругом опасностей и множеством конфликтов – особый регион, испытывающий воздействие многих внешних и внутренних факторов. Если страны региона и мировые державы реально заинтересованы обеспечить устойчивую безопасность на Южном Кавказе, то здесь необходимо сформировать систему уравнивания сил, что снизит нестабильность и сделает военно-политическую ситуацию более прогнозируемой.

**TIGRAN KOCHARYAN – *Armenia in the Context of Regional and International Security.*** – In the present article it is mentioned that today's geographical security structure, together with its multi-faceted and active mechanisms, meets new, non-traditional experiences, the preventing ways of which are regularly being figured out. The desire of creating a one-pole security system brings the feeling of a range of various ongoing threats which, in its turn, leads to the globalization of their usage levers.

South Caucasus, with its dramatic historical heritage, complex images of mid-ethnic relations, wide frame of balanced and non-balanced threats and innumerable antagonisms, is a unique region which is influenced by both inner and outer security factors. If in-territorial countries, micro-territorial and universal states are really intrigued in the South Caucasus security maintenance, then the only way to achieve this is to make an equally powered system within the territory, which will generally decrease the non-stability intentions in the system of sociopolitical alterations by making the security and military-political situation of South Caucasus more predictable.